«ԵՐԵՎԱՆ-ԱՈՒԴԻՏ ԿՈՆՍԱԼՏ» ՓԲԸ
"YEREVAN-AUDIT CONSULT" CJSC

ՀՀ ք. Երևան Բրյուսովի 26
Հեռ./ֆաքս՝ (010) 54 70 26, Բջջ.՝ (093) 89 09 89, Erevan-Audit@mail.ru

«04» մարտի 2008թ.

ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն
Լիցենզիա ԱՕՆ 052

*«ՌԱՄԿՈ» Ապահովագրական ՍՊԸ*
*2007թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունների փաթեթի վերաբերյալ*

## ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

*«ՌԱՄԿՈ» Ապահովագրական ՍՊԸ մասնակիցներին*

Մենք աուդիտ ենք ներարկել «ՌԱՄԿՈ» Ապահովագրական ՍՊԸ -ի հաշվապահական հաշվեկշիռը՝ առ 1 հունվարի 2008թ., ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների և դրամական հոսքերի մասին հաշվետվությունները: Մենք իրականացրել ենք նաև Կենտրոնական բանկին ներկայացվող հաշվետվությունների արժանահավատության ստուգում՝ տեխնիկական պահուստների, հիմնական տնտեսական նորմատիվների պահանջներին, տեխնիկական պահուստներին համարժեք ակտիվների տեղաբաշխման՝ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքով և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխանության մասին: Նշված ֆինանսական հաշվետվությունների կազմման համար պատասխանատու է կազմակերպության ղեկավարությունը:

Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Համաձայն «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի՝ մեր պարտականությունն է նաև տալ կարծիք հետևյալի մասին.

ա/ Ընկերության ներքին աուդիտի գործունեության, ներքին հսկողության համակարգի՝ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքով և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխանության մասին.

բ/ Ընկերության ներքին տեղեկատվական համակարգի առկայության կամ որակի մասին.

գ/ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների ամբողջականության ու հավաստիության մասին.

Աուդիտն իր մեջ ներառում է ընտրանքային կարգով իրականացված այն փաստաթղթերի հաշվեքննումը, որոնք բույլ են տալիս գնահատել հաշվետվություններում և այլ ֆինանսական փաստաթղթերում բովանդակվող տեղեկությունների հավաստիությունը:

Մենք աուդիտն անցկացրեցինք աուդիտի ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք աուդիտը պլանավորենք և իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ հավաստիացում ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են թեստային հիմունքներով այն ապացույցների հետազոտումը, որոնք հաստատում են ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տեղեկատվությունը և բացահայտումները: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների գնահատումը, կազմակերպության ղեկավարության կողմից կատարված էական արժեքների գնահատումների հետազոտումը և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման ընդհանուր գնահատումը: Մենք գտնում ենք, որ իրականացված աուդիտորական աշխատանքների արդյունքները բավարար հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Մեր կողմից իրականացված աուդիտի արդյունքներով Ընկերության ներքին տեղեկատվական համակարգում բացահայտվել են թերություններ, որոնք ներկայացվել են աուդիտորական հաշվետվության մեջ:

*Մեր կարծիքով (բացառությամբ վերոնշյալ հանգամանքի հնարավոր ազդեցության) «ՌԱՄԿՈ» Ապահովագրական ՍՊԸ-ի գործունեությունը համապատասխանում է «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի պահանջներին: Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, ֆինանսական հաշվետվությունները ֆինանսական վիճակի՝ առ 1-ը հունվարի 2008թ., ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի մասին տալիս են ճշմարիտ և իրական պատկերը, կազմված են ՀՀ Հաշվապահական Հաշվառման Ստանդարտների, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի և ապահովագրական գործունեությունը կարգավորող այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:*

*Հաստատված է*
*«ԵՐԵՎԱՆ-ԱՈՒԴԻՏ ԿՈՆՍԱԼՏ» ՓԲԸ*

*Տնօրեն՝* [signature] *Լ. Դոնյան*

*Աուդիտոր՝* [signature] *Գ. Բաղդասարյան*

*Որակավորման վկայական թիվ 003*